ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 օգոստոսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

112
(2778)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՋԱՏՄԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ՝ «ԵԱՄՄ»-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է մայրաքաղաքի աղբահանության հետ կապված խնդիրներին եւ ներկայացրել քաղաքում տիրող ամխիթար իրավիճակը: Վերջերս ArmLur.am-ը գրավոր հարցմամբ դիմեց Երեւանի քաղաքապետարան՝ հասկանալու, թե ինչու են «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» հիմնարկի մեքենաները խոտանված, որքան գումար է ծախսվել բեռնատար մեքենաների սպասարկման համար: Հետաքրքրվել էինք նաեւ, թե կոնկրետ ինչի վրա են ծախսվել գումարները, ինչպես նաեւ նշել էինք, որ տեղեկություններ ունենք՝ մեքենաների յուղերը ժամանակին չեն փոխվել, փոխարինվելուց էլ փոխարինվել են անորակ յուղերով, մեքենաների հերթական տեխզննումները ժամանակին չեն կատարվել, դրա համար էլ մեքենաների շարժիչները անսարք վիճակում են:

Երեւանի քաղաքապետարանից պատասխանել են. ««Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը բեռնատար մեքենաների սպասարկման համար 2022թ. ծախսել է 483.580.645 դրամ: Գումարները ծախսվել են ըստ անհրաժեշտության՝ տարբեր ավտոպահեստամասեր ձեռք բերելու նպատակով, այդ թվում՝ յուղեր-71.379.722 դրամ, պահեստամասեր-122.244.525 դրամ, վերանորոգման ծառայություններ-285.693.880 դրամ, հարակից բաղադրիչներ ու այլ նյութեր-4.262.518 դրամ: Տեղեկացնում ենք, որ հիմնարկի մեքենաները հերթական տեխզննումներն անցնել են սահմանված ժամկետում, իսկ յուղերի ձեռք բերումն իրականացվել է էլեկտրոնային աճուրդի միջոցով. տեխնիկական բնութագրին համապատասխան նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մատակարարը ճանաչվել է հաղթող մասնակից»:

ArmLur.am-ը նաեւ բազմիցս դժգոհություններ է ստացել այն մասին, որ «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկի տնօրեն Բագրատ Աղաջանյանը ծեծի, հայհոյանքների, ստիպողաբար ավելի աշխատացնելու եւ չվճարելու իր գործելաոճով է հայտնի, ինչի հետեւանքով զանգվածային ազատման դիմումներ են գրում այդ հիմնարկի աշխատակիցները: Շատերն էլ ազատման դիմումներ չեն գրել՝ վախենալով, որ իրենց ծեծի կենթարկեն. պարզապես աշխատանքի չեն գնում:

Հետաքրքրվեցինք քաղաքապետարանից, թե ինչ տեղեկություն ունի քաղաքապետարանը այս մասին, ինչ մթնոլորտում են աշխատում «Երեւանի աղբահանություն եվ սանիտարական մաքրում» հիմնարկում, եւ ինչու են աշխատակիցները ազատման դիմումներ գրում, որին քաղաքապետարանից պատասխանեցին. «Հիմնարկի տնօրեն Բ. Աղաջանյանի դեմ տարածված անհիմն տեղեկություններն այն մասին, թե հիմնարկում տիրում է վախի մթնոլորտ, եւ աշխատակիցներին ստիպողաբար աշխատեցնում է առանց հավելավճարի, չեն համապատասխանում իրականությանը: Նշենք նաեւ այն, որ տնօրենը աշխատակիցների նկատմամբ երբեւէ ֆիզիկական ուժ չի գործադրել, իսկ արտաժամյա աշխատանքի դիմաց աշխատակիցները ստացել են լրավճար: Բ. Աղաջանյանը գործում է՝ ՀՀ օրենսդրության, հիմնարկի կանոնադրության, հիմնադրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն»:



«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանը, որը ձախողել էր Ալավերդիում (նրա հայրենակիցներն իրեն չընտրեցին), վերադարձել է խորհրդարանական կյանք եւ լուռ ունեցվածք է դիզում: Նա հիպոտեկով բնակարան է ձեռք բերել «ՕՐԴ ԴԵՎԵԼՈՓՄԵՆՔ» ՍՊԸ-ից, որի մայր գումարի մնացորդը հայտարարատու տարում կազմում է 17 մլն 597 հազար դրամ: Նրա տարեկան եկամուտները կազմել են 10 մլն 995 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմի կողմից: Նրա կանխիկ դրամական միջոցները տարեվերջին ավելացել են՝ կազմելով 3 մլն 611 հազար դրամ, իսկ բանկային դրամական հաշիվները կազմել են 1 մլն 010 հազար դրամ: Մարզում քաղաքական հաջողություն չգրանցած Մկրտչյանը ուժերը փորձել է՝ Ազգային Ժողովում պատգամավոր դառնալով: Նա 2019 թվականին ձեռք է բերել 2013 թվականի արտադրության Mazda մակնիշի ավտոմեքենա: Մկրտչյանի կինը՝ Կարինե Ազարյանը, 2021 թվականին ձեռք է բերել մեքենա՝ Hyundai մակնիշի: Նրա բանկային հաշիվները կազմել են 377 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 2 մլն 900 հազար դրամ: Նրա տարեկան եկամուտները կազմել են 5 մլն 771 հազար դրամ, որից 743 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանից, որտեղ դասախոսում է: Կնոջ քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը կազմել են 4 մլն 517 հազար դրամ Էրեբունի բժշկական կենտրոնից եւ 510 հազար դրամ՝ «ԼԵ ԼԱԲՈՂԱՏՈՒԱՂ ՍԵՂՎԻԵ ՍԱՍ ԸՆԿ» Հ/Մ-ից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 մլն 618 հազար դրամ: Հիշեցնենք, որ նախկինում լրատվական դաշտում աշխատած Արեն Մկրտչյանը մինչ պատգամավոր դառնալը տուն չի ունեցել:

«Ժողովուրդ» օրաթերթը իր աղբյուրներից տեղեկացավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեում հերթական ծանուցագիրն են նախապատրաստում. այս անգամ այն ուղարկելու են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին: Ասել է թե՝ Արսեն Թորոսյանից հետո նախապատրաստվում են լսել գործող նախարար Անահիտ Ավանեսյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Թորոսյանի հարցաքննությունից հետո նախաքննական մարմինը փակուղի է մտել, ու չի բացառվում, որ գործը ջարդեն բժիշկների գլխին, իսկ խոշոր ձկներին պատասխանատվության չկանչեն, ինչպես ավանդաբար: Թե ինչից հետո են իրավապահները որոշել չգնալ խոշոր ձկների հետեւից, կներկայացնենք առաջիկայում: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը վերջապես ներկայացել է Հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննվել է: Հիմա գնդակը կոմիտեի դաշտում է. տեսնենք, թե ինչ կանի կոմիտեն Թորոսյանի հետ, եւ ինչ է սպասվում նրան: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Հակակոռուպցիոն կոմիտե, որտեղից դարձյալ չմեկնաբանեցին Թորոսյանի հարցաքննության վերաբերյալ տեղեկությունները՝ նշելով, որ որեւէ քրեական վարույթով իրականացվող հարցաքննությունների կամ հարցաքննված անձանց վերաբերյալ տվյալներ չեն հրապարակում:



Ինչ իշխանությունները դեռ 2018 թվականին փաստում էին, որ վերջ է տրվելու «ԽԾԲ»-ով՝ «խնամի-ծանոթ-բարեկամ» տարբերակով պաշտոնի նշանակումներին: 2018 թվականից, սակայն, Վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ նշանակվել է Գագիկ Գեւորգյանը, որն աշխատանքի վարձատրություն է ստացել ՀՀ վիճակագրական կոմիտեից 10 մլն 055 հազար դրամի չափով: Իսկ նրա եղբայրը Արմեն Գեւորգյանը դարձել է Հաշվեքննիչ պալատի անդամ, որը Հաշվեքննիչ պալատից ստացել է 11 մլն 356 հազար դրամ: Արմեն Գեւորգյանի ընտանիքի անդամները եւս աշխատանքի են անցել ՀՀ վիճակագրական կոմիտեում. նրա դուստը՝ Աննա Գեւորգյանը, ըստ հոր հայտարարագրի, աշխատում է ՀՀ վիճակագրական կոմիտեում՝ որպես «ՎՏՀ» ծրագրի ԱԸՀ որակի վերահսկող, սակայն, ըստ իր հայտարարագրի, նրա աշխատավայրը Հաշվեքննիչ պալատն է: Գեւորգյանի հետ համատեղ բնակվող Անահիտ Օհանյանը աշխատում է իբրեւ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ծրագրի գնումների մասնագետ եւ ստացել է 3 մլն 678 հազար դրամ՝ որպես քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ: Հենց այսպես էլ աստիճանաբար պետական կառավարման համակարգում սերտաճում են ընտանիքների անդամները, խարխլվում է զսպումների եւ հակակշիռների համակարգը: Ստեղծվում են մենաշնորհներ, որոնք կապված են իրար հետ, եւ ղեկավարվում են մեկ գլխավոր կենտրոնից:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ՄԻՊ-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ադրբեջանը հուլիսի 29-ին արգելանֆի էր վերցրել ԿԽՄԿ-ի միջոցով Հայաստան տեղափոխվող 68-ամյա Վագիֆ Խաչատրյանին: Ադրբեջանի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ նա ձերբակալվել է: Վագիֆ Խաչատրյանը, ըստ մեղադրանքի, իբր, հանցավոր խումբ է ստեղծել, որը 1991թ. դեկտեմբերի 21-ին մասնակցել է Խոջալուի շրջանի Մեբալի գյուղի բնակիչների դեմ հանցագործություններին: «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցով զրուցել է Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանի հետ:

-Պարոն Ստեփանյան, այս ընթացքում դիմել եք տարբեր կառույցների, այդ թվում՝ Կարմիր խաչին՝ ադրբեջանցիների կողմից ապօրինի առեւանգված Վագիֆ Խաչատրյանի հարցով. հաջողվե՞լ է արդյոք որեւէ ձեւ կապ հաստատել նրա հետ:

-Այո՛, դիմել եմ տարբեր կառույցների, Կարմիր խաչն անմիջապես ներգրավված է գործընթացում՝ որպես նաեւ կառույց, որը տեղափոխումն է այդ անձի իրականացրել. փաստացի նրանց ներկայությամբ են փախցրել Վագիֆ Խաչատրյանին: Սրանից բացի, իրավական այլ գործիքակազմներ եւս կիրառվում են իմ եւ Հայաստանի ՄԻՊ-ի կողմից, նաեւ միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի կյողմից: Երեկ էլ արդեն տեղեկություն ստացվեց, որ ՄԻԵԴ-ը Ադրբեջանին ժամանակ է տվել, որ մինչեւ օգոստոսի 8-ը դատարանին տեղեկություն տրամադրի Վագիֆ Խաչատրյանի մասին:

-Հաշվի առնելով Ադրբեջանի գործելաոճը, որ ձեռք բերված որեւէ պայմանավորվածություն չի պահում, ի՞նչ եք կարծում, այս անգամ կկատարի՞ ՄԻԵԴ-ի որոշումը, կտրամադրի՞ տեղեկություն Վագիֆ Խաչատրյանի մասին:

-Տեղեկություն կտրամադրի, բայց դա բավարար չէ, դրանից հետո պետք է գործընթաց գնա, որը միտված լինի Վագիֆ Խաչատրյանի հայրենադարձությանը: Երկու հիմնական ուղղություն պետք է մատնանշենք՝ մեկը՝ իրավական, մյուսը՝ քաղաքական, այս երկուսը զուգահեռ պետք է գործադրենք:

-Կարմիր խաչի ներկայացուցիչը հանդիպել էր Վագիֆ Խաչատրյանի հետ: Ի՞նչ պայմաններում էր նա պահվում, առողջական ի՞նչ վիճակում էր նա գտնվում, զրուցե՞լ եք ԿԽՄԿ ներկայացուցչի հետ:

-Ես նրանց հայտարարությունից եմ տեղեկացել, որ եղել են Վագիֆ Խաչատրյանի մոտ, ու, ըստ իրենց պնդման, առողջական վիճակը նորմալ է:

-Ի՞նչ եք կարծում, եթե Ադրբեջանը հրաժարվի վերադարձնել մեր քաղաքացուն կամ վերադարձնի խոշտանգված վիճակում, նրա նկատմամբ պատժամիջոցներ կկիրառվե՞ն:

-Բարդ հարց է. բնականաբար, պետք է հաջորդ քայլը պատժամիջոցներ կիրառելը լինի, բայց բազմաթիվ օրինակներով տեսել ենք, թե մեր ռազմագերիների նկատմամբ ինչ վերաբերմունք են կիրառել, բազմաթիվ օրինակներ ունենք, որ Ադրբեջանը միջազգային հումանիտար իրավունքի կոպտագույն խախտումներ է թույլ տալիս: Չեմ կարող ասել, թե Վագիֆ Խաչատրյանի դեպքում ինչ կլինի, բայց այն, որ որեւէ ջանք չպետք է խնայվի արդյունքի հասնելու համար, փաստ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀՐԱՎԵՐ

ԿԸՀ-Ն՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Երեւանի ավագանու ընտրություններով հետաքրքրված կուսակցություններին հրավիրում է ֆինարկման:

ԿԸՀ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ԿԸՀ տեղեկատվական տեխնոլոգիաների եւ տեղեկատվության վերլուծության վարչության աշխատակիցները հանդիպմանը կուսակցության ներկայացուցիչներին կներկայացնեն կայքի էլեկտրոնային համակարգի նոր գործիքակազմերը:

«Այս ընտրություններին կուսակցությունները ԿԸՀ-ից ստանալու են իրենց օգտահաշիվները, որի միջոցով մուտքագրելու են եւ՛ իրենց ընտրական ցուցակները, եւ՛ գույքի եւ եկամուտների հայտարարագրերը»,- ասված է հաղորդագրությունում:

Ծրագրի միջոցով ներկայացվելու է նաեւ հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաեւ մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում եւ վերելակներում տեղակայված արտաքին գովազդային վահանակների հայտերը:

ԿԸՀ-ն ցանկալի է համարում, որ քննարկմանը ներկա լինեն այն անձինք, որոնք զբաղվելու են օգտահաշիվ ստանալու եւ ցուցակները մուտքագրելու գործընթացով:

Հանդիպումը կայանալու է օգոստոսի 2-ին՝ ժամը 14:00-ին, ԿԸՀ վարչական շենքում:

Հիշեցնենք՝ Երեւանի ավագանու ընտրությունները տեղի կունենան սեպտեմբերի 17-ին: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն նախկին փոխվարչապետ, այժմ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանն է:

Ընտրություններին կմասնակցեն նաեւ «Լույս» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը, Երեւանի Կենտրոն վարչական շրջանի նախկին ղեկավար Վիկտոր Մնացականյանը, ինչպես նաեւ «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանը:

Քաղաքապետի պաշտոնի համար կպայքարի նաեւ «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, որի ցուցակը կգլխավորի վարչության անդամ Հայկ Գրիգորյանը:

ԱԺ նախկին պատգամավոր, ԱԱԾ նախկին ղեկավար, «Հայրենիք» կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանը չի բացառել, որ կառաջադրի իր թեկնածությունը Երեւանի քաղաքապետի ընտրություններում:

Երեւանի քաղաքապետի պաշտոնին է հավակնում նաեւ ՀՀ արդարադատության նախկին նախարար, «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Արտակ Զեյնալյանը:

«Հայաստան» դաշինքը քննարկում է Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու հարցը:

Երեւանի ավագանու ընտրություններին կմասնակցի նաեւ «Հանուն սոցիալական արդարության» կուսակցությունը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հերթական աբսուրդ հրամանն է ստորագրել, ըստ որի՝ բժշկական հաստատություններում կարմրուկով պայմանավորված տեսակցությունները արգելվում են: Մասնավորապես, կարող են տեսակցել հիվանդին, եթե ներկայացնում են կարմրուկի դեմ պատվաստման կամ նախկինում հիվանդացման փաստը հաստատող փաստաթուղթ: Այսինքն՝ այժմ հիվանդանոցներում բուժաշխատողները հիվանդատես եկած մարդկանցից պետք է փաստաթղթեր պահանջեն՝ տեսակցություն թույլ տալու համար: Փաստացի ԱՆ-ն նորից դիմել է կորոնավիրուսի ժամանակ իր կիրառության անարդյունավետությունը եւ անիմաստությունը ապացուցած հին ու փորձված մեթոդին. չէ՞ որ այդ ժամանակ էլ տեսակցությունները արգելում էին, բայց դրանից դուրս կորոնան շարունակում էր տարածվել: Հարց է առաջանում՝ հիվանդի հարազատին տեսակցությունը արգելելով՝ ավելի քի՞չ կտարածվի կարմրուկը: Հասարակական տրանսպորտում, մասսայական միջոցառումներին ինչո՞ւ կանխարգելիչ եւ հակահամաճարակային միջոցառումներ չկան: Միշտ նույն հասցեն ունեն հրամանները. ինչպես ասում են, դուք ուրիշ հերոսի անուն չգիտե՞ք:

Հիշեցնենք, որ ավելի վաղ առողջապահության նախարարը հրաման էր ստորագրել բուժաշխատողների պատվաստման մասին, ըստ որի՝ անկախ նրանից՝ անձը շփվել է կարմրուկով հիվանդի հետ, թե ոչ, պետք է պատվաստվի մեկ դեղաչափ, եթե դեռ չի պատվաստվել կամ չի հիվանդացել կարմրուկով: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ առողջապահության նախարարությանը այս հարցերի հետ կապված մեկնաբանություն ստանալու համար, սակայն անարդյունք. հրաժարվեցին որեւէ մեկնաբանություն տալ:

ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ ՄԵՐԺԵԼ ԵՆ

Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը մերժվել է նաեւ «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հայկ Մարությանը այս օրերին «փնտրտուքների» մեջ է. նա մեծ ցանկություն ունի մասնակցել աշնանը սպասվող ավագանու ընտրություններին, բայց չի գտնվում քաղաքական ուժ, որի ցուցակով կառաջադրվի. ում դիմում է, մերժում են: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Մարությանը, մերժումներ ստանալով ՀԱԿ-ի, ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի կողմից, որոշել է դիմել «Ինքնիշխան Հայաստան» կուսակցությյան նախագահ Դավիթ Սանասարյանին: Վերջինս նախնական համաձայնել է, եւ սեպտեմբերի 17-ին Երեւանի նախկին քաղաքապետը կրկին պիտի փորձեր իր ուժերը Երեւանի ավագանու ընտրություններին: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում՝ գործը գլուխ չի եկել. Հայկ Մարությանի ու Դավիթ Սանասարյանի միջեւ սեւ կատու է անցել, ու Սանասարյանը եւս մերժել է Մարությանին:

Տեղեկությունը ճշտելու համար դիմեցինք Դավիթ Սանասարյանին. «Նման բան չկա, տարբեր քաղաքական ուժերի ու անհատների հետ քննարկումներ եղել են, բայց չեմ կարող ասել՝ կոնկրետ Հայկ Մարությանը մեզ դիմել է: Նրա հետ էլ որեւէ կոնֆլիկտ չի եղել, չկա նման բան»,- ասաց նա: Այլ կերպ ասած, պայմանավորվածությունը մինչեւ վերջ չի կայացել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՀԽ–Ն ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) կոչ է անում Ադրբեջանին անհապաղ վերացնել Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, քանի որ ավելի քան 120000 մարդ՝ներառյալ 30000 երեխա, տառապում են սոսկալի հումանիտար ճգնաժամի պատճառով:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի տարածած հայտարարությունից:

«Քանի որ հումանիտար ճգնաժամը շրջափակված Լեռնային Ղարաբաղում (Արցախում) հասնում է ողբերգական մակարդակի, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը վերահաստատում է իր հայտարարություններն ու դիրքորոշումները միջազգային հանրության կողմից հրատապ եւ անհապաղ գործողությունների անհրաժեշտության վերաբերյալ», - ասել է ԵՀԽ գլխավոր քարտուղար Ջերի Փիլլեյը: «Լաչինի միջանցքը՝ Հայաստանին կապող միակ ճանապարհը, արգելափակված է ավելի քան յոթ ամիս՝ առաջացնելով հումանիտար արտակարգ իրավիճակ, եւ մեծ վտանգի տակ դրել 120,000 մարդու, այդ թվում՝ երեխաների կյանքը:

Մարդիկ չունեն սնունդ, դեղորայք, լույս եւ գազ: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կոչ է անում միջազգային հանրությանն անհապաղ եւ արագ միջամտել շրջափակումը դադարեցնելու եւ արցախցիների կյանքերը փրկելու նպատակով, այնուհետեւ ձեռնամուխ լինել տարածաշրջանում արդար խաղաղության հաստատման համար դիվանագիտական լուծումներ գտնելու ջանքերին»,- ասել է Փիլլեյը:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կոչ է անում Ադրբեջանին եւ ներգրավված այլ ուժերին անհապաղ վերացնել շրջափակումը եւ վերաբացել Լաչինի միջանցքը, որպեսզի երաշխավորվի քաղաքացիական անձանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը եւ անարգել մարդասիրական մուտքը՝ թեթեւացնելով Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հայ բնակչության տառապանքը:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը մի քանի հայտարարություններ եւ արձանագրություններ է արել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) վերաբերյալ, այդ թվում՝ ԵՀԽ 11-րդ վեհաժողովի արձանագրությունը՝ վերնագրված «2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետեւանքները», որտեղ վերահաստատել է իր դատապարտումը քիմիական զենքի եւ կասետային զինամթերքի կիրառման, քաղաքացիական անձանց, հիվանդանոցների, հանրային ենթակառուցվածքների եւ այլ օբյեկտների վրա հարձակումների եւ մնացած բոլոր պատերազմական հանցագործությունների, գլխատումների, խոշտանգումների եւ այլ վայրագությունների վերաբերյալ, որոնց ականատես են եղել հակամարտության ընթացքում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԸ՝ ՏՈՆՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ոնց որ թե, ուզում է բոլորի մեղքը վերցնել իր վրա»,- օգոստոսի 1-ին Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ պատգամավորության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը՝ պատասխանելով այն հարցին, թե Տոնոյանն է արդյոք մեղավոր պատերազմի այս ելքի համար:

«Մեծ ծավալի պատերազմներին ամբողջ երկիրը պետք է պատրաստ լինի, եւ զինված ուժերը դրան տարիներ շարունակ պիտի պատրաստվեր, միայն 2018-2020 թվականը չէր: Պարոն Տոնոյանը, ոնց որ թե, այդ մասը վերցրեց իր վրա: Մենք, բնականաբար, ունենք տեղեկատվություն, թե որը որից հետո էր՝ թե՛ սպառազինության, թե՛ կառավարման վերաբերյալ»,- ասաց Քոչարյանը:

Անդրադառնալով իր կողմից նախկինում արված այն հայտարարությանը, թե Տոնոյանը չի տիրապետել օդից եկող վտանգներին, Քոչարյանն արձագանքեց. «Ես այդ հարցերը տվել եմ՝ սկսած պարոն Տոնոյանի նախկին հայտարարություններին, այնուամենայնիվ նա պատասխաններ տվեց: Երբ ՊՆ նախարարը գուցե տղայական մոտեցումով ասում է՝նոր պատերազմ, նոր տարածքներ, ապա այդ դեպքում թիկունքն ինչքանո՞վ էր ապահովված: Մենք ուզում էինք հասկանալ՝ պարոն Տոնոյանի թիկունքն ինչքանով էր ապահովված, երբ ինքը ստանձնեց նախարարի պարտականությունները, որովհետեւ դու հակառակորդին ցույց ես տալիս քո վստահությունը»:

Անդրադառնալով Դավիթ Տոնոյանի այն հայտարարությանը, թե, 2018-ի մայիսի գնահատականներով, ՀՀ ԶՈՒ-երը պատրաստ էր 2-3 անգամ իրեն գերազանցող ուժերի դիմակայել, Անդրանիկ Քոչարյանն ասաց. «Մեր դեմ մի հակառակորդ չի եղել. խոսում ենք Թուրքիայի մասին, ահաբեկիչների մասին, վարձկանների մասին, նրանց սպառազինությունը, մենք չենք ունեցել իրենց հնարավորությունը»:

Նշենք, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով էր հրավիրվել անազատության մեջ գտնվող պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը: Նա պատասխանել է պատգամավորների հուզող հարցերին: Հարցաքննությունը կշարունակվի նաեւ այսօր՝ դռնփակ ռեժիմով:

Հիշեցնենք, որ դատարանը թույլատրել է Քննիչ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով 2 օր՝ օգոստոսի 1-2-ին՝ առավոտյան ժամը 9:30-ից մինչեւ հանձնաժողովի աշխատանքի ավարտը, Դավիթ Տոնոյանի մեկնումը մինչեւ ԱԺ հսկիչ-անցագրային կետ, ապա ԱԺ հսկիչ-անցագրային կետից մինչեւ ՔԿՀ իրականացնել ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ վարչակազմի 1 ներկայացուցչի ուղեկցությամբ՝ առանց ձեռնաշղթաների:

Հիշեցնենք նաեւ, որ մեկուկես տարուց ավելի բանտում գտնվող Դավիթ Տոնոյանն օրերս հայտարարեց, որ հուլիսի 4-ին միջնորդություն է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ խնդրելով թույլատրել, որ ներկայանա ԱԺ հանձնաժողովի նիստին: Նա ընդգծել է, որ որոշել է բացատրություններ տալ՝ արձագանքելով Նիկոլ Փաշինյանի եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանի հայտարարություններին: «Ունենալով առանցքային դերակատարում պատերազմի ղեկավարման ժամանակ՝ շատ ասելիք ունեմ հանձնաժողովին»,- հայտարարել էր նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓՈԽԱԴՐԱՄԻՔՈՑ՝ ՀՂԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում քաղաքացիների նախաձեռնությամբ կգործի էլեկտրոմոբիլ՝ հղիներին տնից ծննդատուն տեղափոխելու համար:

«Սիրելի՛ արցախահայեր,

հաշվի առնելով մեր ներկայիս իրավիճակը (տրանսպորտի բացակայություն)՝ տեղեկացնում ենք, որ օգոստոսի 1-ից-13-ը՝ ժամը 10:00-14:00-ն, Ստեփանակերտում կգործի էլեկտրոմոբիլ՝ անվճար, հղի կանանց A կետից (Ստեփանակերտից) ծննդատուն տեղափոխելու համար:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 097132300 կամ 097132399 (Կարեն):

Եկե՛ք այս օրհասական պահին յուրաքանչյուրս մեր ձեւով օգնենք մեր հայրենակիցներին հաղթահարել թշնամու կողմից ստեղծված դաժանագույն խոչընդոտները»,-գրել է Լուսինե Տոնյանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Մինչ միասնական տոմսային համակարգի ամբողջական ներդրումը Երեւանի ավտոբուսային 35 եւ 74 համարի երթուղներում մետաղադրամ ընդունող նոր սարք է տեղադրվել:

Նախկին 100 դրամանոցներ ընդունող սարքի փոխարեն նոր սարքավորումն ընդունում է 50, 100, 200 ու 500 դրամանոցներ եւ վերադարձնում մանրադրամը:

ՏՈՆՈՅԱՆԻՆ ՄԵՐԺԵՑԻՆ

Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, որը երեկ մասնակցում էր ԱԺ քննիչ հանձնաժողովի նիստին, ցանկացավ ուղիղ եթերում վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ մասնակցել նիստին, նրա հետ ուղիղ եթերում հարցեր քննարկել:

Քննիչ հանձնաժողովը, սակայն, մերժեց նրան՝ ասելով, որ իրենք իրենց ձեւաչափն ունեն:

ՄԻԵԴ–Ը ՈՐՈՇԵՑ

ՄԻԵԴ-ը որոշում է կայացրել Ադրբեջանին մինչեւ օգոստոսի 8-ը տրամադրել ժամանակ Վագիֆ Խաչատրյանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին:

Ադրբեջանը պարտավոր է դատարանին տեղեկություններ հայտնել այդ անձի գտնվելու վայրի, պահման պայմանների, առողջական վիճակի, ստացած բուժօգնության եւ հնարավոր վերադարձի մասին:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սեպտեմբերի 1-ից ուժի մեջ կմտնեն շինհրապարակների լրացուցիչ կահավորման պահանջները:

Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից:

«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի անդամների եւ այլ կառուցապատող ընկերությունների հետ քննարկվել են ոլորտի խնդիրներն ու նոր կարգավորումները:

Շենքերի եւ շինությունների կառուցման ընթացքում պետք է ապահովվի շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը:

4-րդ եւ 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների դեպքում կտեղադրվեն օդի որակի մոնիթորինգի սարքավորումներ:

Շինանյութի տեղափոխումը եւ պահպանումը կկազմակերպվի անթափանց թաղանթներով, պահեստավորումը՝փակ տարածքներում կամ ծածկերով:

Մայրաքաղաքի փողոցները չաղտոտելու համար մեքենաները շինհրապարակից դուրս կգան հատուկ մետաղական էստակադայի վրա լվացվելուց հետո:

ՈՒՂԱՐԿՎԵՑ ԴԱՏԱՐԱՆ

ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՆ ՈՒ ԴՈՒՍՏՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հսկող դատախազը 2023 թվականի հուլիսի 23-ին հաստատել է ոստիկանության նախկին պետ Վ.Գ.-ի դուստր Յ.Գ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ 2022 թվականի նոյեմբերի 30-ին հսկող դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում էր հարուցվել Յ.Գ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (Յուրացնելուն կամ վատնելուն հանցակցելը):

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով պարզվել է, որ Յ.Գ.-ն, միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտներ վերացնելով, օժանդակել է 2012-2018 թվականներին ոստիկանության պետի տեղակալ-ոստիկանության զորքերի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած Լ.Ե.-ին, որը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2015-2018 թվականների ընթացքում վատնման եղանակով հափշտակել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Մասնավորապես՝ 2011-2018 թվականներին ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Վ.Գ.-ն, 2015 թվականի մարտի 7-ի թիվ 490-Ա հրամանով, իր դստերը՝ Յ.Գ.-ին, նշանակել է Ոստիկանության զորքերի շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպայի պաշտոնին: Այնուհետեւ Ոստիկանության զորքերի հրամանատար Լ.Ե.-ի հրամանով Յ.Գ.-ն նշանակվել է Ոստիկանության զորքերի անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժանմունքի պետի պաշտոնին: Նա ստացել է ոստիկանության փոխգնդապետի կոչում, որից երեք օր անց, Ոստիկանության զորքերի հրամանատար Լ.Ե.-ի՝ 2018 թվականի մարտի 19-ի 248-Ա հրամանով, Յ.Գ.-ն կրկին նշանակվել է

Ոստիկանության զորքերի շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպայի պաշտոնին: Ոստիկանության պետի՝ 2018 թվականի մայիսի 10-ի 1388-Ա հրամանով՝ Յ.Գ.-ի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա՝ վերջինս ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից:

Նշված պաշտոնին նշանակվելուց հետո՝ մինչեւ պաշտոնավարման դադարեցումը, Յ.Գ.-ն առհասարակ ծառայության չի ներկայացել, ծառայողական պարտականությունները չի կատարել:

Ոստիկանության զորքերի հրամանատար Լ.Ե.-ն, քաջատեղյակ լինելով Յ.Գ.-ի կողմից ավելի քան երեք տարի՝ 2015 թվականի մարտի 7-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, սահմանված կարգով ծառայության չներկայանալու մասին, ոչ միայն չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, այլեւ յուրաքանչյուր ամիս իր ստորագրությամբ հաստատել է Ոստիկանության զորքերի ամսական ֆինանսավորման հայտերը եւ Ֆինանսների նախարարություն ուղարկված վճարման հանձնարարագրերը՝ դրանցում ներառելով ծառայության չներկայացած եւ ծառայողական պարտականությունները չկատարած Յ.Գ.-ի տվյալները: Արդյունքում վերը նշված ժամանակահատվածում Յ.Գ.-ին, որպես աշխատավարձ, պարգեւատրումներ, արձակուրդային գումարներ, փաստացի վճարվել է 8 մլն 838 հազար դրամ (Յ.Գ.-ն ստացել եւ կանխիկացրել է իրեն որպես աշխատավարձ, պարգեւատրումներ, արձակուրդային վճարներ տրամադրված գումարները):

Ավելի ուշ Վլադիմիր Գասպարյանի պաշտպանական խումբը հայտարարություն տարածեց, որում մասնավորապես ասվում էր.

«Քիչ առաջ հրապարակվեց ՀՀ դատախազության հայտարարությունը, ըստ որի՝ հսկող դատախազը 2023 թվականի հուլիսի 23-ին հաստատել է ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի դստեր վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ քրեական վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Վերջին շրջանում ՀՀ դատախազության կողմից միտում է նկատվում, յուրաքանչյուր դեպքում անընդհատ շահարկելով Վլադիմիր Գասպարյանի եւ նրա ընտանիքի անդամների անունները, ի ցույց դնել նրանց կողմից ենթադրյալ հանցավոր արարքներ կատարած լինելու հանգամանքը՝ այդկերպ հասարակության մոտ ստեղծելով բացասական տպավորություն ՀՀ պետականության ստեղծման մեջ կարեւոր դեր ունեցող եւ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ մտած ամենահզոր եւ հեղինակավոր ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի եւ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ:

Ուրախ ենք, որ բոլոր շինծու քրեական վարույթներն արդեն իսկ գտնվում են դատարանում, քանզի բոլորն են ականատես լինելու այդ կարված գործերի քանդման պրոցեսին:

Հ.Գ. Յուրաքանչյուր բան ինչպես կարվում, այնպես էլ քանդվում է:

Վլադիմիր Գասպարյանի պաշտպաններ՝ Էրիկ Ալեքսանյան, Ալեքսանդր Կոչուբաեւ»:

ՈՒՇԱԳՐԱՎ

Ո՞ՐՆ Է ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը երեկ ներկայացել էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողով: Ողջ նիստի ընթացքում Դավիթ Տոնոյանը որեւէ բասացական գնահատական չտվեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից 44 -օրյա պատերազմում կատարված գործողությունների մասով :

Դատելով Դավիթ Տոնոյանի կողմից ԱԺ քննիչ հանձնաժողովում հնչած գնահատականներից՝ կարելի է ենթադրել, որ նրան ԱԺ հրավիրելը եւ ուղիղ եթերով որեւէ սուր հարցադրումներ չանելը եւ, դեռ ավելին, ՀՀ վարչապետի գործողություններին դրական գնահատականներ տալը ունի կոնկրետ նպատակ: Ասել է թե՝ չի բացառվում, որ այս հանձնաժողովի նիստից որոշ ժամանակ անց 1,5 տարի կալանքի տակ գտնվող Դավիթ Տոնոյանը հայտնվի ազատության մեջ:

ԻՆՔՆԱԿԱՄ՝ ԱԱԾ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել է Հակակոռուպցիոն դատարանի որոշումը Դավիթ Գալստյանին՝ բոլորին հայտնի Պատրո Դավոյին գրավի դիմաց ազատ արձակելու որոշումը, ինչի արդյունքում Դավիթ Գալստյանը կրկին կկալանավորվի: Մեզ նաեւ հայտնի դարձավ, որ նա որոշեց ներկայանալ ԱԱԾ, ասել է թե՝ Դավիթ Գալստյանը չսպասեց, որ ԱԱԾ աշխատակիցները գան եւ նրան տանեն մեկուսարան, այլ ինքնակամ պատրաստվում է ներկայանալ ԱԱԾ մեկուսարան:

Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն դատարանը հունիսի 28-ին 40 միլիոն գրավի դիմաց ազատ էր արձակել գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղի 43-ամյա քանաքեռավանցու տան խուզարկությամբ զենք-զինամթերք է հայտնաբերվել:

«Ոստիկանությունից հայտնում են, որ հուլիսի 27-ին նրա տանը խուզարկություն է կատարվել: Հայտնաբերվել են 109 փամփուշտ, 4 հեռադիտակ, զենքի մաքրման համար նախատեսված պարագաներ, СКС տեսակի 7.62 մմ տրամաչափի ինքնաձիգ, ինքնաձիգի շամփուր եւ պահեստատուփեր, 1 պարկուճ, 1 նռնակ, «Տրոտիլ» տեսակի պայթուցիկ նյութ եւ դրա բաղադրիչ մաս կազմող առարկաներ, ավտոմեքենաների 23 պետհամարանիշներ: Նրան պատկանող Audi մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է երկաթե մահակ»,- հայտնել է իրավապահ կառույցը: Քանաքեռավանցին ձարբակալվել է: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Հանգամանքները պարզվում են:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԹՈՒՆԱՎՈՐԵԼ Է ՄՈՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սիրամարգ Կարլենի Մելիքյանը 2022 թվականի փետրվարի 12-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, գտնվելով Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի 10-րդ շենքի թիվ 3 բնակարանում եւ նախապես տեղյակ լինելով այդ բնակարանի խոհանոցում կրծող կենդանիներին ոչնչացնելու նպատակով իր մոր՝ Սվետիկ Մելիքյանի կողմից պոլիմերային տարայի մեջ դրված մկնդեղի գրանուլաների մասին, դրանք, իր ընկալմամբ, համարելով մարդու համար թունավոր, Սվետիկ Մելիքյանի կողմից նույն խոհանոցում կերակուր պատրաստելու ընթացքում, տեսնելով վերջինիս խոհանոցից դուրս գալը եւ այլ սենյակ գնալը, աննկատ կերպով՝ գաղտնի, մուտք է գործել նշված խոհանոց, դիտավորությամբ հիշյալ պոլիմերային տարայի մեջից վերցրել եւ կերակուրի կաթսայի մեջ է լցրել մկնդեղի գրանուլաներ, ապա դուրս եկել խոհանոցից, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չի հասցրել՝ Սվետիկ Մելիքյանի կողմից հիշյալ գրանուլաները նկատելու եւ կերակուրը չօգտագործելու պատճառով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՉԵՂԱՐԿԵԼ ԵՆ ԱՄՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ

Գյումրիում օգոստոսի 5-11-ը կայանալիք Համահայկական ամառային խաղերի պատճառով հյուրանոցներում ազատ համար դժվար է գտնել: Ավելին՝ մեր խմբագրությունը ահազանգ է ստացել քաղաքացուց, որը պատմել է, որ դեռեւս շաբաթներ առաջ «Գյումրի» հյուրանոցում սենյակ էր ամրագրել, իսկ օրերս հյուրանոցը որոշել է չեղարկել ամրագրումը եւ դա պատճառաբանել «տեխնիկական խնդիրներով»:

Քաղաքացին նկատել է, որ նույն հյուրանոցում սենյակի գինը երեք անգամ թանկացել է. եթե ինքը ամրագրել էր 28 հազար դրամով, չեղարկումից հետո այն արժե 70 հազար դրամ, այսօր արդեն որեւէ ազատ սենյակ այդ հյուրանոցը չունի, մյուս հյուրանոցներում եւս դժվար է գտնել ազատ սենյակ:

«Սա առնվազն անհարգալից վերաբերմունք է, այսինքն՝ շաբաթներ առաջ մեր ամրագրումը չեղարկել՝ առանց ներողություն խնդրելու, փոխհատուցում առաջարկելու, առանց որեւէ քայլ ձեռնարկելու մեզ տեղավորելու համար..., իսկ հետո այդ սենյակը եռակի թանկացնել. գումար շորթելը ուրիշ ո՞նց է լինում»,-ասաց վրդովված քաղաքացին:

Ուշագրավ է, որ հյուրանոցի հետ ունեցած նամակագրությունից հետո արտասահմանյան համարից քաղաքացին զանգ է ստանում, ռուսախոս աղջիկը ներկայանում է booking համակարգից եւ հայտնում ամրագրման չեղարկման մասին, մինչդեռ հյուրանոցային բիզնեսին առնչված անձինք գիտեն, որ booking-ը հեռախոսահամար չունի, չի զանգում քաղաքացիներին, ավելին՝ համակարգից որեւէ հեռախոսահամար գտնելը անգամ տնտեսվարողների համար շատ բարդ է:

Հիմնավոր կասկածներ կան, որ «booking»-ից զանգը կազմակերպվել է հենց հյուրանոցի կողմից՝լեգիտիմացնելու «տեխնիկական պատճառներով չեղարկումը»:

Ս. Ս.

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 31-ից օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԴԱՏԱՎՈՐՆ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՀԱՅՏՆԵՑ

Հուլիսի 31-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Բերդ քաղաքի նստավայրում կայացավ ԱԺ նախկին պատգամավոր, նախկինում ՀՅԴ գերագույն մարմնի անդամ Սուրեն Մանուկյանի եւ 3 այլ անձանց գործով նախնական դատական նիստը: Նրանք մեղադրվում են 2022թ. հուլիսի 27-ին Իջեւան համայնքի Աչաջուր բնակավայրի 1-ին փողոցում գտնվող իր տնից ԱԺ նախկին պատգամավոր, գործարար Խաչատուր Քոքոբելյանի 84-ամյա հորը՝Գրիշա Քոքոբելյանին առեւանգելու, նրան Լոռու մարզի Ծաթեր գյուղ տանելու, այդ գյուղի բնակիչներից մեկից վարձակալած հյուրատանը մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը մշտապես պահելու, նրան ազատելու համար 3 միլիոն դոլար գումար ստանալու պահանջով Խ. Քոքոբելյանին «WhatsApp» հավելվածի միջոցով հաղորդագրություն ուղարկելու, նշված գումարից 20.000 ԱՄՆ դոլարն իրենց կողմից նախապես ուղարկված կրիպտոարժույթի հաշվին ստանալու համար: Սուրեն Մանուկյանին եւ 3 այլ անձանց մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 258-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Ս. Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, Ա. Քամալյանի նկատմամբ՝ տնային կալանքը: Մ. Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը, իսկ Թ. Պողոսյանի նկատմամբ խափանման միջոց չի կիրառվել՝ վերջինիս ազատազրկման մեջ գտնվելու պատճառով: Ուշագրավ է, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում տեղեկություններ չկան այս գործով Բերդ քաղաքում կայացած նախնական դատական նիստի մասին: Բերդ քաղաքում կայացած նախնական դատական նիստը հեռաձակվել է «Երկիր մեդիա» հեռուստաընկերության ուղիղ եթերում: Սուրեն Մանուկյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի համարում՝ համարելով, որ իր հանդեպ հարուցված քրեական վարույթը սարքված է: Քրեական վարույթը քննող՝ Տավուշի մարզի առաջին ատյանի դատավոր Սամվել Մարդանյանը հուլիսի 31-ին ինքնաբացարկ է հայտնել՝ պատճառաբանելով, որ ամբաստանյալներից Մուրադ Մուրադյանի հոր՝ Ալբերտ Մուրադյանի հետ, որը 1900-ական թվականներին եղել է հակահետախուզության պետ, 1990-ական մինչ այժմ ինքն ընկերական հարաբերությունների մեջ է, ուստի այդ գործով չի կարող անաչառ դատավոր լինել: Ս. Մարդանյանն ինքնաբացարկի իր որոշումը կհանձնի Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին, քրեական վարույթի քննությունը կհանձնվի այլ դատավորի: Առաջիկայում այդ գործով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում նիստեր կնշանակվեն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀԵՐ՝ ԾԽԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Մոտ 1,3 մլն մարդ աշխարհում ամեն տարի մահանում է պասիվ ծխելու հետեւանքով: Այս մասին հայտարարել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2023թ. ծխախոտի գլոբալ համաճարակի մասին իր զեկույցում:

«Ամեն տարի ծխախոտի երկրորդային ծխի [ծուխ, որն արտաշնչում է ծխողը, ինչպես նաեւ արձակվում է ծխախոտից] ազդեցությունից մահանում է մոտ 1,3 մն մարդ: Այդ բոլոր մահերը կարելի է կանխել»,- նշել են զեկույցի հեղինակները: Նրանք հիշեցրել են, որ պասիվ ծխելը «ստեղծում է մահվան ռիսկեր սիրտ-անոթային, շնչառական, օնկոլոգիական հիվանդություններից, կաթվածից եւ 2-րդ տեսակի դիաբետից»: ԱՀԿ-ում կարծում են, որ բոլոր երկրները, անկախ իրենց եկամուտի մակարդակից, «հնարավորություն ունեն կրճատելու մահասփյուռ ծխախոտի արտադրանքի պահանջարկը»:

Աշխարհի 44 երկրներում, որտեղ ապրում է 2,3 մլրդ մարդ, ընդունված չէ ԱՀԿ երաշխավորած վեց հակածխախոտային միջոցներից (որոնք ստացել են MPOWER անվանումը) ոչ մեկը: Հանձնարարականների այդ համալիրը, որը ստեղծվել է 15 տարի առաջ, ներառում է ծխախոտի օգտագործման մոնիթորինգը, մարդկանց պաշտպանությունը ծխախոտի ծխից, օգնության տրամադրումը ծխելը դադարեցնելու նպատակով, նախազգուշացումը ծխախոտի հետ կապված վտանգների մասին, ծխախոտի արտադրանքի գովազդի վերահսկողությունը եւ դրա հարկերի բարձրացումը: ԱՀԿ-ում երկրներին կոչ են արել «արագացնել ծխախոտի ծխից ազատ շրջակա միջավայրի մասին օրենքների ընդունումը»:

Զեկույցում նշվել է, որ «չնայած ուժեղ ընդդիմությանը» ծխախոտի արդյունաբերության եւ նրանց կողմից, ովքեր կապ ունեն դրա հետ, աշխարհի պետությունների գրեթե կեսը ընդունել է օրենքներ ռեստորաններում, սրճարաններում եւ բարերում ծխախոտի ծխից լիովին ազատ տեղերի ստեղծման մասին: Պետությունների երեք քառորդը մտցրել է կանոններ, որոնք մարդկանց պաշտպանում են ծխախոտից բուժական եւ ուսումնական հաստատություններում:

Զեկույցում դրական են գնահատվել վերջին մեկուկես տասնամյակում ծխելու դեմ պայքարի ոլորտում տեղի ունեցած տեղաշարժերը: Ծխողների բաժինն աշխարհում կրճատվել է՝ 2007թ. 22,8 տոկոսից 2021-ին հասնելով 17 տոկոսի, ինչը «համաշխարհային հանրության հավաքական եւ համակարգված ջանքերի արդյունքն է»: «Եթե այդ բաժինը չկրճատվեր, ապա այսօր կլինեին 300 մլն հավելյալ ծխողներ»,- փաստել են փորձագետները:

2022թ. 5,6 մլրդ մարդ ապրել է այն երկրներում, որտեղ իրականացվել է MPOWER վեց հանձնարարականներից գոնե մեկը: Դա հինգ անգամ ավելին է, քան 2007թ.: «ԱՀԿ-ն համառորեն կոչ է անում բոլոր երկրներին լիովին իրականացնել MPOWER միջոցները, որպեսզի զսպվի ծխախոտի համաճարակը, որն [ամեն տարի] 8,7 մլն մարդու կյանք է խլում ողջ աշխարհում, եւ պատնեշ դնել ծխախոտի արդյունաբերության լոբբիստական ջանքերի դեմ»,- ասել է ԱՀԿ առողջության ամրապնդման հարցերի վարչության ղեկավար Ռոդիգեր Կրեխը:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գործադիրի որոշմամբ՝ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիրը:

Նախագիծը մշակվել է՝ հանրապետությունում գյուղատնտեսական բարձր ավելացված արժեք ապահովող արտադրանքի արտադրության եւ արտահանման ծավալների ավելացման, գյուղատնտեսությունը որպես շահութաբեր բիզնեսի տրամաբանությամբ վերագործարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Նախագծով առաջարկվող ծրագրի հիմնական նպատակն է աջակցությամբ ջերմատնային տնտեսությունների հիմնման միջոցով նպաստել ջերմատներում աճեցվող մշակաբույսերի արտադրության եւ արտահանման ծավալների ավելացմանը, արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը: Ծրագիրը կիրականացվի 2023-2026 թվականներին:

Ծրագրի իրականացման արդյունքում՝

1) ծրագրի շրջանակում արդիական պահանջներով ջերմատնային տնտեսությունների կառուցում՝ շուրջ 35 հա ընդհանուր մակերեսով,

2) բերքատվության բարձրացում 2-3 անգամ ավանդական եղանակով մշակվող ջերմատների նկատմամբ, մասնավորապես՝ լոլիկի դեպքում՝ 1 քառ. մ-ի հաշվով 40-50 կգ բերքի ստացում,

3) ջերմատնային արտադրանքի ծավալների ավելացում, մասնավորապես՝ 2024 թվականին՝ 6,7 հազ. տոննա, 2025 թվականին՝ 11,3 հազ. տոննա, 2026 թվականին՝ 15,6 հազ. տոննա, իսկ 2027 թվականից յուրաքանչյուր տարի (մոտ 15 տարի) կապահովվի շուրջ 15,6 հազ. տոննա լոլիկի բերք,

4) արտահանման ծավալների ավելացում, մասնավորապես՝ լոլիկի դեպքում՝ 2025 թվականից տարեկան շուրջ 10.0 հազ. տոննայով,

5) ոչ սեզոնային ամիսներին ինքնարժեքի իջեցում՝ արտադրության արդյունավետության բարձրացման հաշվին,

6) 1 հա ջերմատունը կստեղծի շուրջ 10-12 աշխատատեղ, իսկ 35 հա-ի դեպքում՝ 350 նոր աշխատատեղ,

7) մեր գնահատմամբ՝ 35 հա ջերմատան շահագործման դեպքում պետական բյուջեի մուտքերը յուրաքանչյուր տարի եկամտային հարկի գծով կկազմեն շուրջ 168,0 մլն ՀՀ դրամ, իսկ 35 հա ջերմատան կառուցապատման դեպքում պետական բյուջեի մուտքերը ավելացված արժեքի հարկի գծով կկազմեն շուրջ 490,0 մլն ՀՀ դրամ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի հանրապետությունում արձանագրվել է 21 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 27-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Արցախի Հանրապետության Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամից հայտնում են, որ նկատի ունենալով, որ վերջին շրջանում հացի պահանջարկը զգալիորեն ավելացել է, ալրաղացները ալյուր արտադրում են հնձվող ցորենից, իսկ տեղումների պատճառով, ցորենի բարձր խոնավությամբ պայմանավորված, ալյուրի արտադրման գործընթացը ընթանում է դանդաղ ու զուգորդվում է չորացման հավելյալ աշխատանքներով, այդ պատճառով առաջիկա երկու-երեք օրերին որոշակիորեն կրճատվելու է հացի արտադրանքի ծավալը:

«Շրջանառվող տեղեկություններն այն մասին, թե, իբր, հաց չի լինելու, իրականությանը չեն համապատասխանում: Խնդրում ենք հատկապես այս օրերին հացի գնումները կատարել չափավոր, որպեսզի նվազագույն չափով ապահովվելու հնարավորություն ունենան բոլորը»,-հայտնում են հիմնադրամից:

Դե իսկ Արցախի Հանրապետության սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից տեղեկացնում են, որ Ստեփանակերտ քաղաքում փաստացի բնակվող եւ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին ձեթի եւ շաքարավազի տեսքով տրամադրվող օգնության վերջնաժամկետն օգոստոսի 3-ն է:

Այն ընտանիքները, որոնք չեն հասցրել ստանալ օգնությունը, կարող են ներկայանալ ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության՝ Ազատամարտիկների 54 հասցեում գտնվող վարչական շենք՝ հետեւյալ ժամանակացույցով՝

օգոստոսի 1-ին՝ ժամը 13:00-15:00,

օգոստոսի 2-ին՝ ժամը 11:00-13:00, 17:00-18:00,

օգոստոսի 3-ին՝ ժամը 9:00-11:00, 15:00-17:00:

Օգնությունը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ծնողներից մեկի եւ անչափահաս երեխաների անձը հաստատող փաստաթղթերի ու հանրային ծառայությունների համարանիշների բնօրինակները (սոցիալական ապահովության քարտը):

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ ԻՋԵՑՎԵԼ Է

Օգոստոսի 1-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 10.25 %:

Բացի այդ, որոշվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը սահմանել 11.75 %, իսկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 8.75 %:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ

ՇՈՒՐՋ 7000 ՄԱՍՆԱԿԻՑ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Օգոստոսի 5-ին Գյումրու քաղաքային մարզադաշտում տեղի կունենա Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը:

Մինչ այդ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ, որոնց ընթացքին հետեւել են Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման կազմկոմիտեի նախագահ Արայիկ Հարությունյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը, Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանն ու այլ պատասխանատուներ:

Համահայկական ամառային ութերորդ խաղերի կազմակերպման եւ անցկացման կազմկոմիտեի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ՝ Շիրակի մարզպետի աշխատակազմում տեղի է ունեցել նաեւ աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են խաղերի կազմակերպչական աշխատանքների հետ կապված հարցեր: Արայիկ Հարությունյանը հետաքրքրվել է արդեն իրականացված եւ ընթացքի մեջ գտնվող աշխատանքներով՝ նշելով, որ ամեն ինչ պետք է արվի Համահայկական խաղերը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Շիրակի մարզպետը հավաստիացրել է, որ ջանք ու եռանդ չի խնայվում յուրաքանչյուր խնդրի լուծման համար: Այնուհետեւ պատասխանատուները հետեւել են մարզադաշտին հարակից փողոցի ասֆալտապատման աշխատանքներին: Իրականացվել են երթեւեկելի մասի 2380 քառակուսի մետր երկշերտ ասֆալտապատման, 40 քառակուսի մետր իջատեղերի եւ 244 քառակուսի մետր մայթերի կառուցման աշխատանքներ:

Այս տարի Համահայկական ամառային 8-րդ խաղերին շուրջ 7000 մարդ կմասնակցի, իսկ հյուրերի թիվը կհասնի տասը հազարի: ԿԳՄՍՆ սպորտի քաղաքականության վարչության պետ, Համահայկական 8-րդ խաղերի գլխավոր մրցավար Նարինե Շահբազյանի խոսքով՝ գրանցվել է շուրջ 170 թիմ. «Ամենաշատ թիմերը գրանցվել են ֆուտզալ մարզաձեւում՝ 48 երկիր, բասկետբոլում եւ ֆուտբոլում՝ հավասարաչափ՝ 28-ական: Բավականին շատ մասնակիցներ ունենք, եւ կարծում եմ՝ սա ռեկորդային թիվ է»:

Այս տարի առաջին անգամ Համահայկական ամառային 8-րդ խաղերը կհյուրընկալեն Սաուդյան Արաբիայում բնակվող մեր հայրենակիցներին: Ամենաշատ հայտ ներկայացվել է Ռուսաստանից եւ Վրաստանից: Դիմել են նաեւ անհատական սպորտաձեւերի համար, ինչպիսիք են լողը, գոլֆը, շախմատը: Այս տարի մասնակիցների թվում կան նաեւ 10-15 տարեկան երեխաներ: Նրանք հիմնականում մասնակցելու են շախմատի եւ լողի մրցումներին:

Օրերս էլ Գյումրու Շախմատի տանը տեղի է ունեցել խաղերի թիմային մարզաձեւերի վիճակահանությունը:

Խաղերի մրցավարները, Նարինե Շահբազյանի փոխանցմամբ, միջազգային բարձր որակավորում ունեն:

«Մրցավարներն ընտրվել են մարզաձեւերի ֆեդերացիաների կողմից, ունենք նաեւ միջազգային մրցավարներ, որոնք սպասարկել են միջազգային մրցաշարեր՝ բասկետբոլի, աթլետիկայի, վոլեյբոլի: Ութ տարիների փորձը ցույց է տվել, որ մեր մրցավարները բավականին բարձր մակարդակով են անցկացնում բոլոր մրցումները»,- նշել է Նարինե Շահբազյանը:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի մասնակիցները խաղային տարբեր մարզաձեւերում կմրցեն հարմարավետ, միջազգային չափորոշիչներին համապատասխան պայմաններում:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես մասնակիցներին համակարգված աշխատանքով կդիմավորեն ու ամբողջ ընթացքում կուղեկցեն համահայկական խաղերի կամավորները:

Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա օգոստոսի 5-ին Գյումրու քաղաքային մարզադաշտում: «Միասնություն սպորտով» կարգախոսով միջոցառման մեկնարկը նախատեսված է ժամը 21:00-ին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Սայաթ-Նովա պողոտա, 20/5 հասցեում գտնվող 77 ք.մ. բնակելի տուն, 54,2 ք.մ. ծածկ եւ 0,029172 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 145000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 18.08.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՆԱՐԿԵՑ

ԱՌԱՋԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Օգոստոսի մեկին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մեկնարկել է առաջին անգամ անցկացվող Ազգային երիտասարդական համաժողովը: Այն կազմակերպվել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից:

«Երիտասարդների կողմից՝ երիտասարդների համար» կարգախոսի ներքո իրականացվող եռօրյա համաժողովին մասնակցում են 50-ից ավելի երկրներից ժամանած 18-35 տարեկան 600 սփյուռքահայ երիտասարդներ համայնքային, գիտական, կրթական, մշակութային եւ այլ շրջանակներից: Համաժողովին հրավիրված են նաեւ 100 բանախոսներ 15-ից ավելի երկրներից:

Համաժողովի նպատակն է հնարավորություն ընձեռել սփյուռքի հայ երիտասարդությանը մասնակցելու Հայաստանի զարգացման գործընթացին, կապեր հաստատելու եւ հզորացնելու միմյանց, ինչպես նաեւ ոգեւորելու ընդլայնել իրենց աշխատանքը եւ ներգրավվածությունը համայնքներում:

«Համաժողովը պետականակենտրոն մտածողությամբ այն հայ երիտասարդների համար է, որոնք կապված են իրենց հայրենիքին, մշակույթին, արմատներին եւ նվիրված հայկական շահերի պաշտպանությանը եւ Հայաստանի Հանրապետության զարգացմանը: Ուրախ ենք, որ համաժողովին մասնակցում են երիտասարդներ, որոնք պատրաստակամ են պետականաշինության բոլոր գործընթացներում համագործակցել եւ ի նպաստ հայրենիքի ներդնել համաերիտասարդական-համահայկական ներուժը»,-բացման խոսքում նշել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը: Նա նաեւ ընդգծել է, որ համաժողովը միտված է երիտասարդների փոխճանաչելիության եւ փոխգործակցության բարձրացմանը, առկա համակողմանի խնդիրների բարձրաձայնմանը, դրանց լուծման ուղղությամբ համակարգված աշխատանքին, անձնական փորձը, գիտելիքն ու կարողությունները թիրախավորված ներդնելու հնարավորությունների վերհանմանը:

Վիդեոուղերձով երիտասարդներին են ողջունել նաեւ հայազգի հանրահայտ երգիչներ Սերժ Թանկյանը եւ Ռոզա Լինը, ինչպես նաեւ աշխարհահռչակ թենիսիստ Կարեն Խաչանովը:

Համաժողովի նախապատրաստական աշխատանքներում, այդ թվում՝ օրակարգի մշակման եւ բանախոսների ընտրության գործընթացներում, ներգրավված են եղել Հայաստանի եւ սփյուռքի տարբեր շրջանակները ներկայացնող երիտասարդներ: Գրասենյակի փորձագետներից եւ 12 երկրների երիտասարդներից կազմված խորհրդատվական մարմինն ամիսներ շարունակ աշխատել է համաժողովի օրակարգային հարցերի մշակման ուղղությամբ: Համաժողովին արծարծվող թեմաներն ընդգրկելու են երիտասարդության դերին, երիտասարդների ներգրավվածության մոդելներին, հայկական շահերի պաշտպանությանը եւ ազգային անվտանգությանը, Հայաստան-սփյուռք հարաբերություններին, ինքնությանը, գիտության եւ կրթության զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացին, հայրենիքում առկա հնարավորություններին, հայրենադարձությանը եւ այլ ոլորտներին առնչվող հարցեր:

Համաժողովի առաջին օրվա ընթացքում գլխավոր բանախոսի, TEDx, պանելային եւ համաժամանակյա քննարկումների ձեւաչափներում ելույթներ կունենա իսպանահայ աստղաֆիզիկոս, գիտնական, «Սթարմուս» փառատոնի հիմնադիր Գարիկ Իսրայելյանը, ԱՄՆ համահայկական ուսանողական ասոցիացիայի նախագահ Միեր Հարությունյանը, Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) գլխավոր գործադիր տնօրեն Արմեն Օրուջյանը, Հայ բարեգործական ընդհանուր միության սփյուռքի երիտասարդության ծրագրերի ղեկավար Գայանե Մանուկյանը, Սանկտ Պետերբուրգի հայկական տարածաշրջանային երիտասարդական ասոցիացիայի հիմնադիր եւ ղեկավար Արշակ Հովհաննիսյանը, «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության նախագահ Գրիգոր Երիցյանը, միջազգային փաստաբան Գառնիկ Քերքոնյանը, ՀՀ զբոսաշրջության կոնիտեի նախագահ Սիսիան Պողոսեանը, CyberHUB-AM համահիմնադիր Սամվել Մարտիրոսյանը, «ռեԱրմենիա» հարթակի համահիմնադիր Գեւորգ Պողոսյանը, Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի հետազոտող Գեղամ Մուղնեցյան, Յեյլի համալսարանի բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Ավագյանը, «Հրանտ Դինք» հիմնադրամի ծրագրերի ղեկավար Ատոմ Շաշկալը եւ գիտության, կրթության, մշակույթի, բիզնեսի, սպորտի, հանրային կապերի ոլորտներում հայտնի այլ փորձագետներ Հայաստանից եւ սփյուռքից:

Ազգային երիտասարդական համաժողովի երեք օրերն ընթանալու է ինտերակտիվ եւ ներառական ձեւաչափով, որի ընթացքում տեղի կունենան պանելային նիստեր, քննարկումներ, հանդիպումներ, պրեզենտացիաներ, աշխատաժողովներ, ինչպես նաեւ էքսպոներ, կապերի հաստատման եւ մշակութային միջոցառումներ:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ԴԱՐՁԵԼ Է ՉԵՄՊԻՈՆ

Ծանրորդ Սուրեն Գրիգորյանը ոսկե մեդալ է նվաճել ծանրամարտի Մ20 տարեկանների Եվրոպայի առաջնությունում: Բուխարեստում ընթացող առաջնության 89 կգ քաշայինների պայքարում հայ ծանրորդը պատվո հարթակի առաջին աստիճանին է կանգնել երկամարտի 341 կգ արդյունքով (150+191): Պոկում վարժությունում հայ ծանրորդը գլխավերեւում պահել է 150 կգ ծանրաձողը եւ արժանացել փոքր արծաթե մեդալի, իսկ հրում վարժությունում Գրիգորյանը փոքր ոսկե մեդալ է նվաճել՝ 191 կգ արդյունքով:

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ՞ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեին կիեռացնի թիմից հաջորդ մրցաշրջանում, եթե նա չերկարաձգի պայմանագիրը փարիզյան ակումբի հետ մինչեւ 2025թ. հունիս. հաղորդում է Foot Mercato-ն: Մբապեն հեռացվել է ՊՍԺ-ից կազմից: Նա չի մեկել իսպանացի Լուիս Էնրիկեի գլխավորած թիմի հետ Ճապոնիա: 24-ամյա ֆուտբոլիստը ցանկանում է եւս մեկ մրցաշրջան անցկացնել ՊՍԺ-ում եւ հաջորդ ամռանն անվճար տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»: ՊՍԺ-ն պատրաստ է մեկ մրցաշրջանով վարձակալության հանձնել Մբապեին, որի ծառայություններով հետաքրքրված են Սաուդյան Արաբիայի «Ալ Հիլալը» եւ անգլիական «Լիվերպուլը»:

ԿԱՐԻԵՐԱՆ՝ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի հարձակվող Լուկաս Սելարայանը կարիերան կշարունակի Սաուդյան Արաբիայում:

Ամերիկյան «Կալամբուս Քրյու»-ի կազմում հանդես եկող հարձակվողը պայմանագիր է կնքել Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ Ֆաթեհ» թիմի հետ: Պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2026 թվականը:

Լուկաս Սելարայանը MLS-ի «Կալամբուս Քրյու»-ի կազմում հանդես էր գալիս 2020 թվականից, որի կազմում դարձել է 42 գոլի հեղինակ:

Ո՞Վ ՀԱՂԹԵՑ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 2023/24 մրցաշրջանի անդրանիկ տուրի վերջին խաղում «Ալաշկերտ»-ը սեփական հարկի տակ ընդունել էր «Փյունիկ»-ին:

Երեւանյան ակումբներից մեկնարկային խաղում հաղթանակ տոնեց «Փյունիկ»-ը, որը երկու անպատասխան գնդակ ուղարկեց «Ալաշկերտ»-ի դարպասը: «Նռնագույնների» կազմում աչքի ընկան Մալաքյանը եւ Հարությունյանը:

Առաջին տուրի շրջանակներում «Շիրակ»-ը հաղթել էր «Վեստ Արմենիա»-ին (2:4), «Նոա»-ն՝ «Վան»-ին (1:0), «Ուրարտու»-ն՝ ԲԿՄԱ-ին (1:2), «Արարատ-Արմենիա»-ն՝ «Արարատ»-ին (1:3):

Հայաստանի առաջնության երկրորդ տուրի խաղերը կկայանան օգոստոսի 4-7-ը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿԱՌԱՋԱԴՐՎԵ՞Ն «ՕՍԿԱՐ» ՄՐՑԱՆԱԿԻ

Լոս Անջելեսի կարճամետրաժ ֆիլմերի 27-րդ փառատոնում հաղթելուց հետո հայ ռեժիսորների երկու ֆիլմ կարող էին առաջադրվել «Օսկարի»: Լոսանջելեսաբնակ ռեժիսոր Գեւին Հովհաննիսյանի «Nowhere» ֆիլմն արժանացել է «Best of Fest Award» մրցանակին: Գործողությունները տեղի են ունենում հորինված Ոչ մի տեղ քաղաքում, իսկ գլխավոր հերոսները ստվերներ են, որոնք «երազում են կյանքի մասին առանց իրենց մարդկային տերերի» 11-րոպեանոց կարճ պատմվածքում:

«Օսկար»-ին կդիմի նաեւ «It Takes a Village» ֆիլմը՝ «Լավագույն միջազգային ֆիլմ» անվանակարգում հաղթողը: Դրաման, որի ռեժիսորն է Օֆելյա Հարությունյանը, «պատմում է Մարիամի պատմությունը, որն ապրում է հայկական գյուղում, որտեղ տղամարդիկ չկան: Ծննդյան օրը նրա ընտանիքի վերամիավորման հույսերը չքվում են, երբ նա պետք է մի կողմ դնի իր կոտրված երազանքները եւ օգնի ապագա մայրիկին՝ Անուշին»:

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅՏՆԻ ԴԵՐԱՍԱՆԸ

25 տարեկանում կյանքից հեռացել է Անգուս Կլաուդը, որն առավել հայտնի է «Էյֆորիա» ժապավենում Ֆեսկոյի դերով: Այս մասին հայտնել է TMZ-ը՝ հղում անելով նրա ընտանիքին: Մեկ շաբաթ առաջ դերասանը հուղարկավորել է հորը, ում հետ շատ մտերիմ է եղել եւ, հարազատների խոսքով, չի կարողացել վերապրել այդ կորուստը, սակայն երիտասարդ տղայի մահվան ստույգ պատճառը նրանք չեն նշել: «Այսօր մենք պետք է հրաժեշտ տանք անհավանական մարդու: Որպես նկարիչ, ընկեր, եղբայր ու որդի՝ Անգուսը առանձնահատուկ էր բոլորիս համար: Միակ մխիթարությունն այն է, որ Անգուսն այժմ վերամիավորվել է իր հոր հետ, որը նրա լավագույն ընկերն էր: Անգուսը չի թաքցրել հոգեկան առողջության հետ կապված իր խնդիրները, եւ մենք հուսով ենք, որ նրա մահը կարող է հիշեցնել մյուսներին, որ նրանք մենակ չեն ու ստիպված չեն ինքնուրույն զբաղվել այդ հարցով լռությամբ»,- ասել են նրա մտերիմները TMZ-ին: Կլաուդը հայտնի դարձավ հանրահայտ «Էյֆորիա» հեռուստասերիալում իր դերով, որտեղ նա մարմնավորում էր Ֆեսկո անունով թմրանյութեր վաճառողին: Հայտնի նախագծի թողարկումից հետո նա բազմիցս սկանդալների մեջ է ընկել՝ կամ նրան մեղադրել են բռնաբարության մեջ, կամ նախատել են ոչ պրոֆեսիոնալիզմի համար: Միեւնույն ժամանակ, նա կարողացավ գրավել հանդիսատեսի սրտերը եւ հավաքել իր երկրպագուների բանակը:

● *Օգոստոսի 5-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա Հ. Դավթյանի «Ասի՝ասեմ, չասեք՝չասեց» ներկայացումը: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է հաշվարկվում աշխատանքային ստաժը:

Արա Մնացականյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքային ստաժում հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչեւ ազատելու օրն ընկած ժամանակահատվածները, այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաեւ զինվորական ծառայության ժամանակահատվածները:

ՀՀ ՄՍԾ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ստաժում հաշվարկվում են յուրաքանչյուր ժամանակահատվածի տարին, ամիսը, օրը, այնուհետեւ՝ գումարվում, ընդ որում՝ յուրաքանչյուր 30 օրը հաշվառվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի:

Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթության չափանիշը:

Արտակ Տոնոյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում:

ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկոյան ուժգին քամուց տապալվել է, այս պահի տվյալներով, շուրջ 50 ծառ, հիմնականում՝ թեղի եւ բարդի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՔԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 16 +28 + 33
Կոտայքի լեռներ	+12 + 15 +28 + 32
Կոտայքի նախալեռներ	+19 + 21 +34 + 36
Գեղարքունիք	+12 + 16 +27 + 32
Լոռի	+14 + 17 +25 + 28
Տավուշ	+16 + 21 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+12 + 15 +27 + 30
Արագածոտնի նախալեռներ	+18 + 23 +33 + 38

Արարատ	+22 + 24 +38 + 39
Արմավիր	+21 + 23 +38 + 39
Վայոց ձորի լեռներ	+13 + 15 +28 + 30
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 24 +37 + 39
Սյունիքի հովիտներ	+18 + 22 +37 + 39
Սյունիքի նախալեռներ	+14 + 18 +28 + 31
ԼՂՀ	+19 + 23 +35 + 39
Երեւան	+21 + 23 +36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.8.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք
կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*